

**Ազգային ժողովում քաղաքական կոնսենսուսի, բանավեճի և  
հաղորդակցության կարողությունների հզորացում**

**Strengthening National Assembly in Building Political Consensus,  
Debate and Communication**

Համառոտագիր  
Policy Brief

# Չարգացումներ արտաքին միջավայրում, համագործակցության նոր հրամայականներ ներսում

# Համառոտագիր



Մարդկային  
գարգացման  
միջազգային  
կենտրոն

## Անձեռնամխելի բոլորինը

Քաղաքական դաշտում համագործակցության անհրաժեշտության մասին շատ է խոսվել: Իհարկե, հենց հիմա համայնի համագործակցային միջավայր ակնկալելը միամտություն կլիներ՝ հաշվի առնելով այն իրականությունը, որում մենք ապրում ենք: Սակայն ակնհայտ է նաև, որ սկսել պետք էր երեկվանից: Միշտ կան թեմաներ, որոնք կարող են լինել միավորող, թեմաներ, որոնք անսակարկելի են յուրաքանչյուր հայաստանցու և բոլոր քաղաքական ուժերի համար: Մեր երկրի արտաքին քաղաքականության առնվազն երկու գերակայությունների՝ Արցախի հիմնախնդրի հայանպաստ լուծման և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հիմնախնդրների շուրջ քաղաքական ուժերի միջև պետք է առկա լինի համաձայնություն, պայմանավորվածություն: Անկախ ներքին քաղաքական խնդիրներից, քաղաքական ուժերի պայմանավորվածությունների ճակատագրերից՝ բոլորը պետք է հավատարիմ լինեն երկրի ազգային շահերի պաշտպանության այս փոխհամաձայնեցված շրջանակին: Այս դիտարկման հետ, թերևս, այսօր համաձայն են բոլորը կամ գրեթե բոլորը:

## Նոր մարտահրավերներ արտաքին ճակատում

Ֆրանսիայի վարչական դատարաններում մեկնարկել է գործընթաց, որի արդյունքում հակասահմանադրական են ճանաչվում և չեղարկվում Ֆրանսիայի և Արցախի մի շարք քաղաքների միջև կնքված բարեկամական հռչակագրերը: Միաժամանակ ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովում (ԵԱՀԿ ԽՎ) շրջանառության մեջ է դրվել մեզ համար խիստ բացասական նշանակություն ունեցող բանաձև:

Ֆրանսիական դատարանների նման վճիռները կարող են նախադեպային լինել և հնարավորություն ընձեռել Ադրբեջանին նմանօրինակ պրակտիկա կիրառել այլ երկրներում ևս: ԵԱՀԿ ԽՎ բանաձևի հնարավոր ընդունումը ևս կարող է նախադեպային լինել, և Ադրբեջանին «ոգևորել» ԵՖՏԽՎ-ում նույնպես ավելացնել լրբբիստական գործունեության տեմպը:

Արտաքին քաղաքական դաշտում նոր մարտահրավերներ են ի հայտ եկել Հայաստանի համար, որոնց արդյունավետ կառավարման համար, նախ, խնդիր ունենք երկրի ներսում ապահովելու լայն կոնսոլիդացիա՝ ուժերի համախմբում: Անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես կարող ենք հնարավորին լայն ճակատով դիմագրավել արտաքին այս մարտահրավերներին, քաղաքական ուժերից յուրաքանչյուրն ինչպիսի ներդրում կարող է ունենալ այս գործընթացում: Ակնհայտ է, որ առնվազն արժեքային մակարդակում Արցախյան հարցը միավորում է բոլորիս: Ուրեմն, նախևառաջ, անհրաժեշտ է հասկանալ, թե. ա) որոնք են քաղաքական ուժերի միջև առկա սահմանները, երբ խոսում ենք արտաքին քաղաքականության մասին, բ) առանձնացնել այն հարցերը, որոնց շուրջ համագործակցությունը հնարավոր է, գ) հասկանալ այն մեխանիզմները, որոնց օգնությամբ համագործակցությունը կարող է կայանալ:

## Միշտ կա այլընտրանք

Ցանկացած խնդիր ունի լուծում, եթե նրան մոտենաս բոլոր կողմերից: Որևէ նոր մարտահրավեր վախենալու չէ, եթե մենակ չես, եթե շատ եք ու միասին: Արտաքին քաղաքական դաշտում այս նորահայտ խնդիրներն էլ լուծման բազում այլընտրանքներ ունեն: Օրինակ, Ֆրանսիայում բավականին հետաքրքիր օրենսդրական նորմ է գործում առ այն, որ դատական վճիռների վրա ազդեցություն կարող են ունենալ ոչ միայն դատական նախադեպերը, այլև ճանաչում ունեցող ակադեմիկոսների կողմից հրապարակված աշխատությունները: Հայկական կողմը կարող է հաջողությամբ օգտագործել այս մեխանիզմը ևս: Ֆրանսիացի այդպիսի պրոֆեսորներից մեկը հրապարակավ պնդում էր, որ Արցախի խնդրի միջազգային ընկալման հարցում հակամարտող կողմերից մեկ քայլ առաջ կլինի նա, ով կկարողանա երկրի ներսում իրականացնել ուժերի



Երևան 0001  
Մայրաթ Նուվա 19  
Հեռ.՝ +374 10 582638  
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org  
www.ichd.org

կոնսոլիդացիա և ներկայացնել երկրում առկա իշխանական ու ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից ստորագրված, միասնական դիրքորոշում արտահայտող հռչակագիր:

Լուծման տարբերակ է սա, թե ոչ, միայն ստուգելուց հետո կարելի է ասել: Մի բան, սակայն, ակնհայտ է ի սկզբանե. երբ բոլորով եք, ու միասնական նպատակ կա, լուծումներ հաստատ կգտնվեն:

*Համառոտագիրը մշակվել է 2019թ. հունիսի 13-ին կայացած՝ «Փոփոխություն միջազգային միջավայրում. համագործակցության նոր հնարավորություն և մարտահրավերներ» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:*

*Կրոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:*

*Քննարկումը կազմակերպվել է Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հետ համագործակցությամբ:*

